

ՄԱՅԻՍ

Հարկան դիր 10 րոպե, կէս տարվան 6 րոպե:
Առանձին համարները 5 կոպեով:

Թիֆլիսում գրվում են միմյանից ամբողջատան մէջ:

Օտարադարձարարի պիտոմ են ուղղակի
Тифлис. Редакция «Маяк»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից):

Հայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով:

Հայտարարութիւնների համար զմարում են
իրարանկար բառին 2 կոպեով:

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

Բարձրագոյն մանկֆեստ:—Ներքին ՏԵՍՈՒ-
թիւն: «Рус. Купеческ» լրագրի թղթակցութիւնը:
Նամակ խմբագրին: Նամակ խմբագրին: Ներքին
լուրեր:—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Ֆրանսիա:
Նամակ Գերմանիայից: Արտաքին լուրեր:—ՀԵ-
ՌԱՎԻՐՆԵՐ:—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:—ՖԵ-
ԼԻՏԵՏՈՆ:

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՄԱՆԻՖԵՍՏ ԱՍՏՈՒԹՈՒ ԿԱՄՔՈՎ

ՄԵՆԻՔ ԱԼԷԿՍԱՆԴՐ ԵՐՐՈՐԻ

Կայսր և ինքնակալ ամենայն Ռուսաց, Թագաւոր
Լեհաստանի, Մեծ իշխան Ֆինլանդիայի և այլն,
և այլն և այլն

Յայտնում ենք մեր բոլոր հաւատարիմ
հայտաւորներին: Տիրոջ կամք էր, Նրա ան-
հասանելի անօրինութիւններով վերջ տալ
Մեր սիրելի Մեծի թագաւորութեանը մար-
տիրոսական մահով և Մեզ վրա դնել ինքնա-
կալ կառավարութեան սրբազան պարտքը:
Հնազանդվելով Նախախնամութեան կամ-
քին, և պետութեան ժառանգական օրէն-
քին, Մենք այդ բեռը ընդունեցինք Ամենա-
բարձրաւ Աստուծու առաջ ընդհանուր
ժողովրդական վշտի և սարսափի զար-
հուրի ժամին, հաւատարմով որ Նախա-
սահմանելով Մեզ իշխանութեան գործը
այդքան ծանր և բազմաշխատ ժամանակին,
Նա չի զլանայ Մեզ իր ամենակարող օգնու-

ՖԵԼԻՏՈՆ

Վերջապէս Կ. Պոլսից Նամակ ստացայ. գրում
են որ Տնտեսեան անունով մի երեսասարդ աղ-
գային մի երգ է յօրինել, և օսմանեան բարե-
խնամ կառավարութիւնը Նրան բանտարկել է
իրբն ապստամբների պարագլուխ: Ափսոս, խեղճ
երկրասարդը բանտին մէջ մեռել է: Իսկ գրա-
վաճառ Գաֆաֆեանը տակաւին բանտարկված է
եղել, անշուշտ Նրան ևս մեռնելուն սպասում են
որ բանտիցը ազատեն... Այս ողորմելի վիճա-
կին անյապարհ դարձան է հարկաւոր, ամեն կող-
մից ազդը ճնշվում է, օգնութիւն է աղաղակում,
ոչ ոքին հողը չէ, իւրաքանչիւրը իր էջն է քը-
շում, բազմաթիւ յօդուածագիրներ, ազգասէրներ,
հայրենասէրներ միմեանց վրա են յարձակվում:
Մէկը միւսին դատարկապարտ, որովայնաւոր է
կոչում, իսկ մի ուրիշը՝ միւսին զեմբել, թեթե-
ւոյիկ է ասում, անկարելի է զանազանել թէ սո-
ցա մէջ ծանրաբուք, որովայնից չը խօսողը,
խեղճը մինչև պարտը հանողը զորն է, Բոլոր այս
վիճարանութիւններից դուրս է գալիս, որ իւրա-
քանչիւրը իր գրչին ոճը ուղղւում է ցոյց տալ:
Մեր ազգի արդի վիճակը նմանում է մօրուքը
վառված մարդուն, որ աշխատում է հանգցնել
մօրուքին մէջ ընկած կրակը, իսկ ուրիշները
ասում են—կանց եղբայր, սպասի՛ր, մի հանգցնի՛ր,
սա պապիրոսնիս վառենք:—
Այսու հանդերձ չը պետք է յուսահատվիլ
այլ սպասել և յուսալ, ամեն բանին վախճանն
է գովելի, (եթէ վախճանն ունենայ):
Աւելի երկար ողբեր կարգաւ ուրիշներին
յանձնելով, փոքր ինչ զուարճութիւն հայթայ-
թենք մեր սիրելի ընթերցողաց:

Ինչ զրպարտութիւն: Ասում են թէ Թիֆլի-
սում հայազէտներ չը կան, հաւատարիկ երկու
հայ երկրասարդների հետեւալ խօսակցութիւնից՝
մարդս կարող է մի գաղափար կազմել թէ, հայ-

թիւնը: Հաւատում ենք Նոյնպէս որ ամ-
բողջ աշխարհում իր սիրով և հաւատար-
մութեամբ դէպի իր Թագաւորները յայտնի
բարեպաշտ ազգի ջերմեռանդ աղօթքները
կը դարձնեն Մեզ վրա և Մեր կառավարա-
կան աշխատանքի վրա Աստուծու օրհնու-
թիւնը:

Ի Տէր հանգուցեալ Մեզ, ընդու-
նելով Աստուծուց ինքնակալ իշխանութիւնը,
Նրան յանձնած ազգի բարիքի համար,
մինչև մահը հաւատարիմ մնաց իր ընդուն-
ված ուխտին և արիւնով կնքեց իր մեծ
ծառայութիւնը: Ոչ այնքան իշխանական
խիստ հրամաններով, որքան իշխանական
բարութեամբ և հեղութեամբ կատարեց Նա
իր Թագաւորութեան ամենամեծ գործը—
ճորտերի ազատութիւնը, կարողանալով գրա-
ւել դորա գործակցութեանը կալուածատէր
ազնականներին, որոնք միշտ լսող են բա-
րի և պատիւ ձայնին: Հաստատեց դա-
տաստան պետութեան մէջ և իր հպատակ-
ներին, որոնց բոլորին անխտիր ընդմիշտ
ազատ դարձրեց, կանչեց տեղական վարչու-
թեան և հասարակական տնտեսութեան
կառավարութեանը: Թող յաւիտեան օրհն-
ված լինի Նրա յիշատակը:

Ազգի անարժան եղեռնագործերի ձեռքով
ստոր և չարագործ սպանումն Ռուս Թա-
գաւորի, իր հաւատարիմ ազգի մէջ, որ
պատրաստ էր զոհել իր կեանքը Նրա հա-
մար,—է մի սարսափելի, ամօթալի և

կարանութեան յառաջադիմութիւնը մինչև որ է
հասել Թիֆլիսում:

—Բարեկամ, որպիսի է կենցաղավարութիւն
ձեր յայտ աշխարհի:

—Ոչինչ է պիտոյ վաճառ բանիդ աղորդիլ տալ
քեզ պատասխանի:

—Պո՛ւմ...

—Վայ, ամեն. անբար աս ինչ բան է, աղա-
ղապարհում է Թիֆլիս Նոր եկած մի պօլսեցի:

—Մի վախար, կէս օր է, թնայնօթ արձա-
կեցին:

—Այս ինչ տարօրինակ սովորութիւն է, տե-
սէք սա երեխաներին, այնքան վախեցան որ
լաց են լինում:

—Հոգ չէ, Թիֆլիսում սովորութիւն եղած մի
բան ըստ կարգին պէտք է շարունակվի, թէն
դորա մէջ մահուան վտանգ էլ լինի:

—Յարգելի պարոն, գալիս եմ պարոն... կող-
մից, խօսք էք տուել որ ինձ համար ձեր կան-
տօրում մի պաշտօն տաք:

—Շատ բարի, ասացէք խնդրեմ, առաջ ո՛ւմ
մօտն էիք:

—Պարոն ...եանցի մօտ էի:

—Ի՞նչու թողնեցիք:

—Ինչի՞նչ չը լսեցիք, Նորա մանկացան:

—Շատ լաւ, անկից առաջ որոնեղ էիք:

—Պարոն ...եանցի մօտ հաշտապահ էի:

—Նրանից ինչու հեռացաք:

—Նա ևս կոտորելից:

—Չարմանալի բան, աւելի առաջ ո՛ւմ մօտ
ծառայում էիք:

—Պարոն ...կողմն զանապահն էի:

—Նրանք էլ մանկացան:

Ռուսաստանում չը լսված գործ, որ մեր
ամբողջ երկիրը մթնացրեց վշտով և սար-
սափով:

Մեր մեծ վշտի մէջ Աստուծու ջայնը
հրամայում է Մեզ քաջութեամբ ձեռք առ-
նել կառավարութեան գործը, յոյս դնելով
Աստուծու Նախախնամութեան վրա, լի հա-
ւատով դէպի ինքնակալ իշխանութեան ոյժն
ու արդարութիւնը, որ Մենք ազգի երջան-
կութեան համար կանչված ենք հաստատել
և պահպանել ամեն տեսակ դաւադրու-
թիւններից:

Թող քաջալերվեն, ուրեմն, վրդովված և
սարսափած սրտերը, իրանց հայրենիքը սի-
րող և սերունդից սերունդ խառնակաւ
Թագաւորական իշխանութեանը Մեր հաւա-
տարիմ հպատակներին: Նրա հովանաւորու-
թեան տակ և Նրա հետ անխղիւր դաշնու-
կցութեամբ մեր երկիրը շատ անգամ ան-
ցրել է մեծ խռովութիւններ և զօրացել
ու փառաւորվել է ծանր փորձանքների և
տառապանքների մէջ, հաւատով դէպի
Աստուծու որ Նրա վիճակների կարգադրողն է:

Նուիրելով Մեզ Մեր մեծ ծառայու-
թեանը, Մենք հրաւիրում ենք Մեր հաւա-
տարիմ հպատակներին ծառայել Մեզ և
Պետութեանը հաւատով և արդարութեամբ,
արմատախիլ անելու գարշիլի խռովու-
թիւնը, որ ամօթ է բերում Ռուսաց երկ-
րին,— հաւատը և բարոյականութիւնը
հաստատելու,—մանուկների բարի դաստիա-

Բարեկամ, սաստիկ հազ ունեմ, ոչ ցորեկը
հանգիստ ունեմ, ոչ գիշերը, բո՛ւրիքը ասաց որ
իշու կաթ խմեմ, բայց ես վախենում եմ որ չի-
շանամ, ինչ խորհուրդ կը տաս:

—Բանի տարեկան ես:

—Չտախտի երեսուն և հինգը լրացուցի, այժմ
երեսուն և վեցին մէջն եմ:

—Ուրեմն մի վախար, արդէն իշու հասակին
մէջն ես, ուղածիդ չափ խմիր:

—Յետ մահուան (Աստուծու պահէ) ի յիշատակ
իւր մեծագործութեանց հայերը ո՛ւմ համար պէտք
է արձան կանգնեցնեն:

—Էջմիածնայ Մանկունուն համար:

—Ամեն տեսակ քիմիական բաղադրութիւն-
ների իւր մէջ պարունակող հեղուկը որն է:

—Թիֆլիսի ջուրը:

—Աւետարանի ապագային ջերմեռանդութեամբ
հետեւող քրիստոնեայ ազգ մնաց աշխարհին երե-
սին:

—Ի՞նչու չէ, հայոց ազգը:

—Հայոց ինքնավարութիւն տրուած ժամանա-
կը քանի հայ պատրաստ է դեկը ձեռք առնել:

—Չորս միլիոն:

—Շուտ հարստանալու եղանակը որն է:

—Հասարակ կարծիք կոչված բանին բնաւ
ականջ չը դնել:

—Թիֆլիսի փողոցները ընդհանրապէս երբ կը
ջրեն:

—Անձրե եկած ժամանակը:

—Բարեգործական ընկերութեան նպատակը
ինչ է:

—Լուսաւորութիւն տարածելով Նախիլ ընկե-
րութիւնները սնանկացնել:

րակութեանը,—անարդարութիւնը և յափշ-
տակութիւնը ջնջելու,— կարգ և ճշմար-
տութիւն վերահաստատելու այն հիմնա-
կութիւնների գործունեութեան մէջ, որոնց
չնորհել է Ռուսաստանին Նրա Բարերար,
Մեր Սիրելի Մեծի:

Տուած է Ս. Պետերբուրգում 29-ին ապ-
րիլի, հազար ութ հարիւր ութսուն մէկ
թիւին Գրիստոսի Մենդեան յետոյ, իսկ Մեր
Թագաւորութեան առաջին տարին:

Իսկականի վրա Նորին Կայսերական Մեծու-
թեան, սեփական ձեռքով ստորագրված է:

ԱԼԷԿՍԱՆԴՐ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

„РУССКИЙ КУРЬЕРЪ“ ԼՐԱԳԻԹ ԹԸՂ-
ԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Մօսկվայի «Русский Курьер» լրա-
գրում կարգում ենք հետեւալ թղթակ-
ցութիւնը Թիֆլիսից:

Շատ ժամանակ չէ մենք կարգացինք մայ-
րաքաղաքի լրագիրներում, որ կառավարու-
թիւնը կարգադրութիւն է արել քննելու
այն պատճարները որ ստիպում են Ղարսի
Նահանգի բնակիչներին գաղթելու դէպի
Թիւրքիա:

Ղարսի Նահանգը թիւրքաց տիրապետու-
թեան ժամանակ շտեմարան էր ոչ թէ մի-

—Թիֆլիսի ապրուստի թանգութիւնը ո՛ւմ հա-
մար զգալի չէ:

—Տէրաւորներին համար:

—Ազգասէր ինչ է նշանակում:

—Ազգասէր բառը շատ բան է նշանակում,
բայց բուն բառի իմաստով նշանակում է—կեր,
անք, և ուրախ լիւր, ազգին համար ոչինչ մի ա-
նիք, ուրիշը թող անէ, դու արա, ես արդէն մը-
տածել էի—այս տեսակ ազգասիրութեան համուն
հոտուն չես կշտանար:

—Օրիորդ Վ. Գարաբաշեանի բենեֆիտի գի-
շերը արտաքին ընդունելութեան մէջ ինչ բան
պակաս էր:

—Փոխանակ երկրորդների ֆայտօնի առաջ
չորքոտանիներ էին լծված:

—Ինտելեգենցիա ինչ է նշանակում:

—Ռուսերէն չը գիտեմ, այնու հանդերձ այդ-
պէս իտալական քնքոյչ վերջաւորութիւն ունե-
ցող մի բառի համապատասխան որ և իցէ չօշա-
փելի մի մարմին Թիֆլիսում կայ թէ ոչ, դա էլ
չը գիտեմ:

—Ի՞նչ բան է որ Թիֆլիսում շատ կայ Պօլ-
սում քիչ:

—Ռուսացի:

—Իսկ Պօլսում շատ, Թիֆլիսում քիչ:

—Գերասան:

—Ճշմարիտ փիլիսոփայական կեանք վարող
երջանիկ արարածը ո՞վ է Թիֆլիսում:

—Ժօրժ Ղը Պարլին:

—Պարտքը մինչև կոկորդը հասած անգործ մի
մարդու փրկութիւնը ինչ բանի մէջ է:

—Մի քանի հազար մանէթ օժիտ ունեցող
օրիորդի հետ ամուսնանալու մէջ:

Կըռօ

այն ամբողջ թիւերէն չայստանի համար, բայց և մեր Անդրկովկասի համար: Հացի գին հաւասարակշռութիւնը պահպանվում էր թիֆլիսի վաճառանոցի վրա Ղարսի այդ պէս անուանված կ ար մի քորնի երեւալով: Երբ Ղարսի նահանգը միացվեցաւ Ռուսաստանին, մենք գտանք այդ նահանգի մէջ մի աշխատանք երկրագործ ժողովուրդ, բաղկացած հայերից և թիւրքերից, որոնք հասցրին երկիրը անտեսական բարեկալութեանը: Այդ թիւրքերն էլ մեծ մասամբ հայեր են, մահմետական դաւանութեան, որի ապացոյց կարող է լինել նախ՝ նրանց տիպը, որ հայոց տիպին նման է, երկրորդ՝ քրիստոնէական տաճարներ որոնց նրանք երկրպագում են քրիստոնէաների հետ միասին, երրորդ՝ գիւղերի հայոց անունները, որոնք մեծ մասամբ նուիրված են քրիստոնէական սուրբերի պատէին, վերջապէս՝ հայոց լեզուն, որով դեռ մինչև այժմ ծերերը խօսում են իրանց անայլին յարաբերութիւնների մէջ և նրանց սեփական խոստովանութիւնը թէ՛ «մենք առաջ էր մէն էինք, իսկ այժմ թիւրքեր ենք (մուսուլման)»:

Ղարսի նահանգի Ռուսաստանին միացնելուց յետոյ, թիւրքաց հայերը, որոնց մօտ սերը դէպի Ռուսաստանը յափշտակութեան է հասնում, ուրախանում էին ասելով՝ «թող մենք տանջվեմք, բայց զոնէ հայաստանի այն մասը, որ միացրած է Ռուսաստանին երջանիկ կը լինի նրա տիրապետութեան տակ»:

Որովհետեւ Անդրկովկասի մի քանի տեղերում, ինչպէս Ալեքսանդրապոլի և Ախալցխայի գաւառներում, վարելահողերի պահպանութեան պատճառով իւրաքանչիւր տարին արեւմտահէղ կողմեր են ծագում երկրագործ ազգաբնակչութեան մէջ, այդ պատճառով այդ գաւառների հայ գիւղացիները դիմեցին կառավարութեանը, խնդրելով որ թոյլ տրի նրանց գաղթել դէպի նոր նուաճած երկիրների ազատ մնացած տեղերը: Նրանց այդ խնդրքը մերժվեցաւ: Այդ բաւական չէր. հայերին յայտնվեցաւ, որ նրանք փողով մինչև անգամ, իրաւունք չունեն գնել հողեր Ղարսի նահանգում և ձեռք բերել անշարժ կայքեր թէ Ղարս քաղաքում և թէ նահանգի այլ քաղաքներում: Իսկ նահանգի միացնելու քիչ ժամանակ յետոյ կատարված առքի թղթերը պէտք է անվաւեր համարվին: Այդպիսով կազմվեցաւ հայերի համար բնակութեան իրաւունքի սահմանափակում: Այնուհետեւ սկսվեցաւ Ղարսի նահանգի բնիկ ազգաբնակչութեան գաղթեցնելը: Հետեւեալ օրինակներից դուք կարող էք ձեզ մի գաղափար կազմել թէ ինչ միջոցներով կատարվեցաւ այդ գաղթեցնելը: Բողոքովն անսպասելի կերպով ստացվում է Շահնալար հայոց գիւղում Ղարսի նահանգապետի հրամանը գաղթել, ուր կամենան և զիջանել իրանց հողերն ու բնակարանները մալականներին: Բողոքները, խնդրքները, նահանգապետին ուղարկած պատգամաւորութիւնները ոչինչ չեն օգնում: Շահնալարցիները թողնում են իրանց դաշտերն ու բնակարանները, ծախում են իրանց անասունները և մասամբ ուղեւորվում են դէպի թիւրքաց սահմանները, մասամբ էլ գնում են Ալեքսանդրապոլ, Ղարս և թիֆլիս մշակութեան համար: Ալաշայի ստորոտում գտնվող հայոց Բազնայր գիւղի բնակիչներն նոյնպէս հրամայած է գաղթել, թողնել իրանց դարերը գաշտերը, իրանց հայրերի: Վերջապէս բազնայրցիներն տալիս են բնակիչներ Ալաշա սարի միւս լայնու-

կայրի վրա մի ինչ որ ժայռոտ և անշարժ տեղ, որտեղ ոչ թէ միայն անհնարին է պարապել երկրագործութեամբ, այլ նրանց չեն տալիս մինչև անգամ արօտատեղեր կենդանիների համար: Իսկ Բազնայր շնորհում են թափառական քիւրդերին: Գաղթած հայերը, որպէս զի մի կերպ պահպանեն իրանց տաւարը, մասնաւոր յարաբերութիւններ են կապում քիւրդերի ամենամատակոյ գիւղի հետ և այդ վերջիններից սահմանված վարձով աւազակներ են իրանց անասուններին քիւրդերին տուած և հայերից խլած արօտատեղերի վրա: Այս տեսակ պայմանադրութեան մասին տեղեկանալով Ղարսի նահանգական վարչութիւնը արգելում է քիւրդերին թոյլ տալ որ հայերը իրանց հօտերը արածացնեն նրանց տուած արօտատեղերի վրա: Հայերը վճռում են ընդդիմանալ այդ կարգադրութեանը, չը կարծելով որ նա վարչութեան կողմից տուած լինէր, այլ ընդունելով նրան որպէս քիւրդերի մի խորամանկութիւն, որով նրանք կամենում են հասնել իրանց աւելի էլ մեծ վարձ պահանջել նրանց արած փող անասունների համար: Բայց շուտով նրանք ճանաչում են իրանց սխալը: արօտները վրա երևում են կազակներ և եսաուներ որոնք քշում են նրանց անասուններին այդ արօտատեղերից: Գիւղացիները ծախում են իրանց կենդանիները, թողնում են իրանց նոր շինած բնակարանները և նոյնպէս գաղթում են դէպի թիւրքիս:

Ղարսի նահանգի թիւրք ազգաբնակչութեան հետ վարչութիւնը, ճշմարիտ է, փոքր ինչ աւելի մարդասեր կերպով է վարվում, քան քրիստոնէայ-հայերի հետ, բայց դարձեալ նոյն ոգով:

Հասկանալի է այժմ վերջացնում է ռուս լրագրի թղթով լցրը, թէ ինչի Ղարսի նահանգի ազգաբնակչութիւնը գաղթում է դէպի թիւրքիս:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 9 մարտի

Ամսոյ 1-ին հայոց ներկայացման ժամանակ թիֆլիսի յարգելի հասարակութիւնը մի յայտարարութիւնից իմացել է, որ ես իբրեւ թէ հրաժարուել եմ իմ պարտաւորութիւններից: Այդ պատճառաւ շատերը ինձ դիմեցին իմանալու թէ ինչու ես չեմ կատարում իմ պարտաւորութիւններս: Զայտարարութիւնը մութ լինելով, լուրեր են տարածել իբրեւ թէ ես բենեֆիկարի փողերը ստացել եմ, նոյնպէս մայիս ամսուայ ուժերը, և յետոյ պայմանագրեր խախտելով հեռացել եմ բեմից: Ես այդպէս բան չեմ արել. որովհետեւ ես մինչև վերջը բենեֆիկար յայտնվել եմ ասորում: Զարմանալի էլ կը լինէր որ ես ինքս ինձ միտաէի, և ուրիշ բենեֆիկար ներկայացման չը մասնակցէի: Թատրոնական ասպարիզում ամենից բարձր և թանկագին ինձ համար եթէ մի վարձատրութիւն կայ, հասարակութեան համակրութիւնն է: Երկու տարվայ ընթացքում ամեն անգամ երբ ինձ առիթ տուէին բեմ դուրս գալու, թիֆլիսի բուն հասարակութիւնը միշտ ընդունել է ինձ անկեղծ համակրութեամբ, ուստի ես պէտք էր ապերախ գտնվի դէպի թիֆլիսի հասարակութիւնը, եթէ իմ պարտաւորութիւններս չը կատարէի: Զոհնելով թատրոնի գանձին իմ ուժերիս մէկ մասը, վերջապէս, համբերելով կատարել եմ ես իմ պարտաւորութիւններս: Ես գտնէ այսպէս համոզված եմ: Աւտի խնդրում եմ մասնաժողովից որ հրապարակաւ յայտնի գործի հանգամանքները, թէ որն է այդ պարտականութիւնը, և ինչ պարտաւորութիւն է որ ես չեմ կատարել, որպէս զի հասարակութիւնը տեղեկանալ գործին և երկու կողմը լսելով այնպէս դատէ: Այս մի քանի տող խօսքերիս, յարգելի խմբ-

ազիր, խնդրում եմ տեղ շնորհեցէք Ձեր պատուելի լրագրոյն մէջ, որով օգնած կը լինէր մի պանդուխտ աղքկայ:

Աստղիկ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 8 մայիսի

Մայիսի 7-ին հայոց ներկայացումն կար: Դատարկութիւն. 15 օթեակ, թէ չեմ սխալվում, դատարկ, աթոռներ և բաղկաթոռներ, բաւական թւով դատարկ: Չանձրալի դատարկութիւն, թէ կառավարի, թէ դերասանի, թէ հանդիսականի համար: Համբաված հինօրեայ դերասանի բարձր տաղանդն անգամ բաւական մազնիս չէր ունեցել թիֆլիսի հասարակութիւնը դէպի թատրոն ձգելու:

Ներկայ հանդիսականի համար տանջանքի չորս անգամ ժամ: Չորս անգամ ժամ նստած ես, կամ քեզ նստեցուցել են, որ զանազան անհամ ուշաթափութիւններէ, անաղ արտասուքներէ, անսովոր ջղաձգութիւններէ, տըր-նական շարժումներէ ու վայրենի կանչիւններէ վերջ քեզ ասեն թէ մի Ժօրժ Մօրիս թուաւորող ոչ թէ մի Անթուրէի տիկինն է, այլ մի Անթուրէ: Անթուրէն չէ ուզում որ մի անաղապան, բայց հարուստ Ժօրժ Մօրիս կայք ու կայանք, դեղին ոսկիք, մի Անթուրէի տիկինն, Ժօրժ Մօրիսի կնոջ հասնի, այլ իւր որդուն, որ Ժօրժի կնքածն է և որին Ժօրժ, դեռ չտուածացած, իրեն ժառանգ էր ընտրել: Անա ինչի համար չորս ժամուայ նահատակութիւն:

Թատրոնը դպրոց է, ամեն դպրոց ունի իր ծրագիր. ծրագրին այնպէս պիտի կազմվի որ նրանով ուսած աշակերտ իր բնիկութեան իր ազգին պիտանի, օգտաւէտ լինի:

Գպրոցը չունեցածներս պիտի տայ մեզ. քննել թէ ինչ չունեք, ասել է քննել թէ ինչ պէտք է ունենաք: Գպրոցի գինի իրանց ձեռք ունեցողներ պէտք է ճանաչեն այն հասարակութեան ու ազգի պիտոյքներ, որի համար գործել են ուղում:

Թատրոնը նաև մի հայելի է. ինչ է հայն, ինչ պէտք է լինի հայն, հայելու մէջ ցոյց տուր այդ բան: Նախապաշարեալ, անառաքինի, անընկերասէր, անաղապան, աղէտ, ինքնապաշտ, նիւթապաշտ հայի կողքին դիր լուսամտի, առաքինի, ընկերասէր, ազգասէր, հայրենասէր հայն:

Թատրոնը քուրաչ, հալոց է. դիր այդ հալոցի մէջ հայ կեանքն ու զոէ: Եւ երբ տեսնում ես թէ հայ կեանքն թատրոնի համար հիւստած արժանաւոր բան չառ չը կայ, այն ժամանակ պատճառաւոր ընտրութեամբ փոխ բեր օտարէն քեզ չունեցած: Մարդիկ մի և նոյն պահասութիւններն ունեն, և ուղղութեան համարեա մի և նոյն միջոցներ: Միայն, իրենց պահասութիւններ և ուղղութեան միջոցներ իրենց դարգացման աստիճանի համեմատ են: Պէտք է ընտրել մի ուրիշ ազգի կեանքի մէջ զարգացման այն դարակցեալը, որի վրա կանգնած է քու ազգը. ցոյց տուր, այդ ազգի հեղինակների թատերական գրուածներով, թէ նա ինչպէս բարոյապէս, ընկերապէս և նիւթապէս ինքն իրան ուղղել, սրբադրել, ազնուացուցել և ազատ ու անկախ վիճակի է հասել: Իսկ եթէ ուզում ես եւրօպական որ և է նրբացած Գօն-Ժուանի պահասութիւններ ցոյց տալով մեր անտաշ կինտօի պահասութիւններն ուղղել, սխալվում ես. կինտօն Գօն-Ժուանն չէ:

Թատրոնը դայիակ է. նա պէտք է մեզ, իմաստուն մատակարարութեամբ, լուսաւոր գաղափարներ, ազգասիրական գաղափարներ և ձգտում տայ, մեզ խօսել սովորցնէ: Բայց այն խառնակ՝ աջուձախ ընտրութիւնը, այն անգոյն առանց որ և է որոշ ձգտման խաղերը, այն խառնակ ու կործնիչ լեզուն, սիրա, միտք ու լսելիք կրթող չեն:

Մայիսի 7-ի թաղը, թող իր ներքին անհամութիւնն ու անհոտութիւն, առ նուազն երեք անկիւն բարբառ էր պարունակում, Աւալեան—Մանգինեան բարբառ, Աղամեան—Մանգինեան բարբառ և Էքեան բարբառ. մի տեսակ խառնապուր:

Գերատանական խմբի մէջ պատուական ուժեր կան. դրանցով կարելի է լաւ գործ տեսնել. բայց խաղերի ընտրութեան և լեզուն երի մաքրութեան ու հարազատութեան վրա դեռ-

չատ ու չատ բան կայ ասելիք: Եթէ մեծարդոյ կառավարին այդ բանի վրա մասնաւոր ուշադրութիւն չը դարձնէ, իր թատրոնը մայիսի 7-ի կրկնութիւնը չատ ու չատ անգամ կը տեսնի:

Ա. Մ. Ե. Պ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մենք խոսել ենք որ Գօրու մօտ գտնվող Ուպլիսցիի վրացախօս հայոց գիւղի բնակիչները զղուելով մեր հոգևոր իշխանութեան, Էքեմիածնի անպիտանութիւններից և նրա ուղարկած քահանայի բարբարոս վարմունքից ծխականների հետ, այս օրերս խնդրեք են ներկայացրել Վրաստանի էկզարխին որ կամենում են ռուսացաւանութիւնն ընդունել: Ուրեմն դարձեալ մի ամբողջ հայ գիւղ պէտք է օտարանայ: Ինչ է անում Էքեմիածինը, մեր խաւարատների կարծիքով ազգութեան այդ նեցուկը: Չը մոռանանք որ Այվազովսկու մահից յետոյ Վրաստանի և Իմերէթի հայոց թիւը չունի առաջնորդ, իսկ նրա ուժերը ուսումն է Էքեմիածինը:

Ստացանք Շամախուց, Էմմանուէլ Փիլրուդաղանցից 8 բուրլ յօգուտ թիւրքիսի հայ ուսուցիչներին: Այդ փողը պարուն ուղարկում է ամեն ամիս և սա ապրիլին է:

Ամբողջ հարաւային Ռուսաստանում հրէաների դէմ ամօթալի անկարգութիւնը և նրանց ջարդը շարունակվում է: Ռուսաց մեծ թերթերից մինը, այն է «Новое Время» լրագիրը այն խորհուրդներ հասաւ, որ իր առաջնորդող յօդուածում առաջարկում է գաղթեցնել Ռուսաստանից բոլոր հրէաներին: Գրա համար լրագրի առաջարկած սիջոցներից զլխաւորը սա է. դրկել հրէաներին ամեն մարդկային իրաւունքներից, որպէս զի նրանց գրութիւնը անտանելի լինի Ռուսաստանում և այնուհետեւ թագաւորական հաւով գաղթեցնել նրանց օտար երկիրները, խստութեամբ արգելելով նրանց վերադարձը դէպի Ռուսաստանը:

Ներկայ համարում տպում ենք «Рускій Курьер» լրագրի թիֆլիսի մի թղթակցութիւն Ղարսի նահանգի դրութեան վրա:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖԲԱՆՍԻԱ

Լրագիրները հաղորդում են հետեւեալը: Ֆրանսիական հանրապետական մամուլը նորից սկսեց զբաղվել ամենքից մոռացված «Հենրիկոս V» թագաւորով, որ խաղաղ ապրում է Ֆրանսիայի մէջ կոմ Շամբօրի անունը կրելով: Նորից բարձրացան հին վէճերը միապետականների և հանրապետականների մէջ, Աստուածային իրաւունքի և ժողովրդական իշխանութեան կուսակցի-ների մէջ: Այդ վէճերը բաւական անմեղ են և հանրապետականները ծաղրելով են վիճում, ի նկատի ունենալով Ֆրանսիայի այժմեան պետական հաստատ կազմակերպութիւնը: Կոմ Շամբօր նորերում մի նըշանաւոր գուժար ուղարկեց Վատիկան իբրեւ սուրբ Պետրոսի նուէր: Այդ առիթով Հռօմի կղերական լրագիրները սկսեցին գովել «թագաւորին» և քարոզել, որ Ֆրանսիայի համար միապետութիւնը անհրաժեշտ է: Այդ գովասանքները և դատողութիւնները արձագանք գտան Փարիզի մէջ հրատարակվող կղերական լրագիրների մէջ և առիթ տուին լրագրական վիճաբանութիւններին: Այդ վիճաբանութիւնները աւելի էլ զրական ձև ստացան, երբ կոմ Շամբօրի կուսակցի օրինական Էքզարք Ներվէ յայտնեց թէ կամենում է փարիզի Գ-դ շրջանի մէջ քուէարկվել պատգամաւոր լինելու համար: Կոմ Շամբօրը նրան հովանա-

Արդէն ուղարկեցաւ իւր բաժանորդներին ՐԱՅՖԻԻ «ԽԵՆԹԸ» անու-
նով վրայասանութիւնը: Նոր գնել ցանկացողներին խնդրում ենք զիմել ՇՈՒՇԻ,
կամ ուղղակի հրատարակչին, կամ Մահաթի-Յակոբեանցի տպարանը: ԲԱԳՈՒ
պ. Արեւսանդր Թարխանեանցին, ԹԱՐՎԷՁ՝ պ. Գրիգոր Բէջանեանցին,
Հրատարակչի հասցէն. Մյուս, ՎԵ ԿՈՆՏՐԻ ԱՐԱՅԱՆՇԱ ԱԲԵԼՍ ԱՓ-
ՐԵՏԻԱՆՍՍ՝.

Դուք եկաւ մամուլի տակից և վաճառվում է «Կենտրոնական» և պ. Զ.
Գրիգորեանցի «Կովկասեան» զրաւաճառանոցներում «Մտաւոր, Ֆիզիկական
և բարոյական ինքնակրթութեան մասին» հեղ. Զօն Ստիւարտ Բլէկլի. Թարգմ.
Գրիգոր Շահբազեանի. գինն է 60 կոպէկ: Օտարաբաղաճացի կարող են
ուղղակի Թարգմանչին զիմել այս հասցէով. ՎԵ ԿՈՆՏՐԻ, Միւս, ՎԵ ԿՈՆՏՐԻ ԱՐԱՅԱՆՇԱ
ԱՐԵՏԻԱՆՍՍ.

Տպագրութեան համար բոլորովին պատրաստ է Թարգմանչի հետեւեալ աշխա-
տութիւնը. «Մայրական Դատարարութիւնը, բնութեան օրինաց վերայ հիմն-
ուած». հեղ. Ժ. Բամբուստի:

2րդ նայելով մաքսերի աւելանալուն տպրանքները առաջվայ գներով կը ծախվին.
ԿՈՆԳՐՈՒԹԵՑ 1 ր. 5 կ. և 1 ր. 10 կոպ., շատ լաւ ՄՕՆԻՆԳ 1 ր. 20 կ. և
1 ր. 40 կ., հիւսնայի ԿԱՅՍԱՆԻ 1 ր. 60 կ. և 1 ր. 80 կ. և ԱՄԵՆԱԼԱԻ
ԹԵՑ 2 ր. տոսնց թղթի: Անգլիական ընկերութիւնը 4 ր.—40 ր. և հրայաններ 20
ր.—200 ր. Անգլիական խանութի մէջ: Գործակալութիւն ԲԱՐՆԱՅԻ ԹԱՄԲԵ-
ՐԸ, Ջոնսոնի ԿՈՂՊԵՔՆԵՐԸ, Տուրքի ԳՐԻՉՆԵՐԸ և Էկստրակտ կակաո-
շօկոպի ծախելու համար, որոնք վարկի հանդիս ժամանակ ոսկէ մեղալ ստացան:
ՀՈՏԱԻԷՑ ԹԵՑԻ ՖՈՒՆՏԸ ՊԱՏՈՒԱԿԱՆ ԹԵՑԱՄԱՆՈՎ 1 ր. 65
կ. և ամենալաւ 2 ր. 30 կ.: Վաճառականներին օգտակէտ է մեծ քանակութեամբ
ապրանքներ առնել Անգլիական խանութի մէջ: Ամբողջ հազուստ 15 ր., կոնֆեկտներ
հազի գէմ 60 կ. ֆունտը: 71—100

Վերականգնեցող ՄԱԿ-ՄԱՍ-
ՏԵՐ, մազերը ամրացնող և նրանց
ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ վերադար-
ձնող: Գինը 2 ր. շիշը, ՓՈՍՏԱ-
ՅՈՎ ուղարկված 2 ր. 49 կոպ.:
ԱՆԳԼԻԱԿԱՆ խանութի մէջ:



Մի և նոյն տեղը ԽԵՆԱՅԻ
ԻՂ, մազերը ամրացնող հա-
մար, 1 ր. ամանը վրձին զրա-
ցաւի գէմ, ՏՈՒԱԼԵՏԻ ՍԱ-
ՊՈՆ և հոտակէտ ջրեր և այլն:
67—100

«Խ Ե Ն Թ Ը»
ԱՐԿԱՆԵՐ ՎԵՐՋԻՆ ՌՈՒՍ-ՌՈՒՐԲԱԿԱՆ
ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՆ ՐԱՅՖԻԻ
Տպագր. մաքուր թղթի վրա, գիրքը բաղ-
կանում 400 էրեսից: Թիֆլիսում ծախվում է
«Մշակի» խմբագրատանը, «Կենտրոնական»
զրաւաճառանոցում, «Կովկասեան» զրա-
վաճառանոցում և պ. Զաքարիա Գրիգորեան-
ցի մօտ, և պ. պ. Շահբազեանցի, Բոգար-
ջեանցի, Հովսեփեանցի ծխախոտի մագազին-
ներում:
Գինն է 1 րուր 20 կոպ.:

ՄԻՆՁԵՒ 1881 ԹՈՒԱԿԱՆԻ ԱՊ-
ՐԻԼԻ ՎԵՐՋԵՐԸ ՇՈՒՇՈՒՄ
ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԵՆ ԱՅՍ ՎԵՑ
ԳՐԻԳՐԸ:
1) Երկու մանրակապ. Ալֆօնս Դօդէից
Թարգմ. Ն. Տէր-Աւետիքեանի, գինն է 15 կ.
2) Պօզնանու ուսուցչի օրագրից, Թարգմ.
Տ. Նազարեան: 20 կ.
3) Պատու ժամեր, ինքնուրոյն բանա-
տեղծութիւններ: Ն. Տ. Աւետիքեան: 25 կ.
4) Հանապարհօրդութիւն Լարաբաղում,
Ալալեանցի: 30 կ.
5) Ծագիկ և ծագիկահատութիւն, Թարգմ.
Տ. Նազարեանցի: 15 կ.
6) Քնար խօսակ, բանաստեղծութիւն-
ներ Ն. Տ. Աւետիքեան: 50 կ.
Այս վեց գրքի գինն է միասին 1-50
կոպէկ: Աւանձին մէկի համար բաժանոր-
դագրութիւն չէ ընդունում, բացի «Քնար
խօսակից» որի համար աւանձին կարելի է
ստորագրել և փանցեալ հինգը աւանձին:
Հրատարակչի հիշանկ Յ. Նազարեան:

ԱՐԾՐՈՒՆՈՒ զաւլէրէում յուլիս ամսից
վարձով տրվում է ԹԱՏՐՈՒՆ մօտ եղած
բուֆէտը և ընտանեային ցանկացողները
թող զիմեն Արծրունու զաւլէրէայի կան-
տօրա:
4—10
Տպագրութեան համար պատրաստվում է մեր
ժողովածուի ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԸ: Այս հրա-
տարարութիւնը բաղկացած կը լինի շատ
հատորներից, որոնք հետզհետէ 'ի լոյս
կընծայվին. նոքա պէտք է բովանդակ են
իրանց մէջ հայ ժողովրդեան բերանացի
աւանգուծիւնները. — ՀԵՔԻԱԹԵՐ. ԺՈՂՈ-
ՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐ. ԲԱՌԵՐ ԵՒ ՈՃԵՐ. Ա-
ՌԱՄԵՐ. ԱՌԱԿՆԵՐ. ԱՆԷԾԲԵՐ. ՕՐԶ-
ՆԱՆԲԵՐ. ԵՐԳՈՒՄԵՐ. ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ.
ՇՈՒՏ-ԱՍԵԼՈՒԿՆԵՐ. ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱԼԵՐ
և ՊԱՐ-ԵՐԳԵՐ:
Որոյ համար լի յուսով զիմում ենք մեր
ագագայնց, ընդհանուր ուժով օգնելու մեզ,
ուղարկելով պատշաճաւոր նիւթեր, բուն
տեղական բարբառով: Այգայիներին պատիւ
կունենանք յիշել, որպէս հրատարակութեան
աշխատակիցներ, ուղարկելով նոցա մի մի
օրինակ բոլոր հատորներից:
Մեր հասցէն՝
Թիֆլիս. ՎԵ ԿՈՆՏՐԻ ԱՐԱՅԱՆՇԱ,
դոկտօր Բագարտու Նաւասարտյան.

Въ Редакціи газеты
«МШАКЪ»
Продается
„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ
ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“
Д. Григорія АРЦРУНИ.
Брошюра напечатана въ Москвѣ.
Цѣна 25 коп.

Մամուլի տակից դուք եկաւ և վաճառվում են Կենտրոնական Գրաւաճառանո-
ցում հետեւեալ գրքերը:
1. Հայը և Հայաստանը օտարների աչքում, հրապարակական դա-
տարարութիւն ընթերցուած Թիֆլիսի ժողովարանում մայիսի 17-ին 1879 թ. Արգար
Յովհաննէսեանի. Թ. 1881 թ. գ. 30 կոպ.
2. Մտաւոր Ֆիզիկական և բարոյական ինքնակրթութեան մասին հեղ. Զօն
Ստիւարտ Բլէկլի. Թարգմ. Գր. Շահբազեանի. գինն է 60 կոպէկ:
3. Հենչէլի. Բանաւոր և զրաւոր հաշուելու խնդիրներ ծխական դպրոցների
համար փոխադրեց Ս. Մանգիլեանց 1-ին և 2-րդ տարի. Թ. 1881 թ. գ. 40 կ.
4. Քնար Ժողովրդական երգեր հեղ. Խաչ. Տէր-Խաչատրեանց, Երեւան 1880
թ. գ. 45 կ.
5. Նոյն տեղը վաճառվում են հետեւեալ գրքերը:
6. Մարկուս Աւրելիոս կայսեր իմաստասիրական և խրատական թղթերը, Վե-
նետիկ գ. 1 ր. 50 կ.
7. Բիւլլէրի. Պատմական վրայասանութիւն Ք. Վ. Սէնդին Գաղղիացու
Վենետիկ գ. 1 ր. 50 կ.
8. Մագգադիւնէ. վրայասանութիւն Պ. Յուլիոս Սանտոյ. անգամ Գաղղի
ձեմարանին, Վենետիկ գ. 1 ր.
9. Սոլ. Կենտրոնի քերթուած ի մահն Արեւի Թարգ. Հ. Մանուէլի Վ. Զախ-
ճարեան Վենետիկ գ. 1 ր. 75 կ.
10. Ֆինկոնի Արկաճը Տէրեմբայ, Թարգ. Եղուարդայ Վ. Հուրմուզեան Արք-
եպ. Շիրակայ Վենետիկ գ. 3 ր. 50 կ.
11. Առակը Եղուարդի, Թարգ. ի գաղղիական լեզուէ Հ. Մինաս Վ. Բժշը-
կեան Վենետիկ գ. 2 ր. 50 կ.
12. Յուլիոսի Կեսարու յիշատարանը գաղղիական պատերազմին, Թարգ. Հ. Ար-
սենի Կ. Բագրատունու Վենետիկ գ. 1 ր. 75 կ.
13. Աշխարհագրութիւն հին և նոր Հայաստանից դպրատանց տղայոց հայոց
համար Հ. Մանուէլի Վ. Քաջունի Վենետիկ գ. 1 ր. 50 կ.
Օտարաբաղաճացի ծանապարհի ծախք են վճարում իւրաքանչիւր լուրջուն 10
կ. առանց փողի պատուէրները չեն կատարվում:

Ա Ն Գ Լ Ի Ա Կ Ա Ն Մ Ա Գ Ա Զ Ի Ն Ո Ւ Մ			
Համեմատեցէ թէյի ֆունտը	1 ր. 5 կ.	Մօսկվայից բերվող թէյի հետ	Ֆ. 1 ր. 30 կ.
—	1 ր. 10 կ.	—	Ֆ. 1 ր. 40 կ.
—	1 ր. 20 կ.	—	Ֆ. 1 ր. 60 կ.
—	1 ր. 40 կ.	—	Ֆ. 1 ր. 80 կ.
—	1 ր. 60 կ.	—	Ֆ. 2 ր. —
—	1 ր. 80 կ.	—	Ֆ. 2 ր. 50 կ.
Ամենալաւը	2 ր. —	—	Ֆ. 3 ր. —
82—100			

Թիֆլիզում կազմվում է «Վարմամարդական
ընկերութիւն» (Гимнастическое общество), որի
նպատակ է տալ իր անդամներին միջոց վարժ-
վելու մարմնամարզութեան սրախաղութեան
(фехтование) և հրացան արձակելու մէջ, քա-
ղաքից դուրս զբօսանքներ և ուրիշ թող տված
զուարճութիւններ անել, որոնք զարգացնում են
ֆիզիկական կարողութիւնը:
Ընկերութեան կանոնադրութիւնը տեղութիւ-
նից արդէն հաստատված է և տպված է № 90
«Кавказ» լրագրի մէջ, ապրիլի 25-ին:
«Վարմամարդական ընկերութիւն» անդամ
գրվել և տարեկան 10 ռուբլի վճարել կարելի է:
1) Փոխարքայի զխաւոր կառավարութեան
դեպարտամենտում, կարլ կարծովիչ Կեստերի
մօտ, ամենայն օր 11 ժամից մինչև ժամի 3 ցե-
րեկվայ:
2) Վիկտօր Ալեքսանդրովիչ Գլինգշտեյնի մօտ
6-ից մինչև 8-ը երեկոյան, Թամազեւիլի տանը,
Սոլդատսկի բաղարի վրա:
3) «Кавказ» լրագրի խմբագրութեան մէջ:
4) Ալեքսանդր Ալեքսանդրովիչ Բորենի մօտ:
Միջակելով փոխալ փողոցի վրա, ուսական մա-
գաղմունք:
ՐՕՍՏՈՎ-ԴՕՆԵ-ՎՐԱ ՔԱՂԱՔԻ ԳՈՐԾԱ-
ՐԱՆՏԵՐ ԵՄ. Ս. ԷՆԴՆԱՐԵՅՈՎ յայտնում է
հետեւեալը. իմ ծխախոտի արդիւնաբերու-
թեան մեծ պահանջը գրեց Թիֆլիսի
գործարանատէր Պիրալով և ընկ. և Գաղե-

զօլին նմանվել իմ արդիւնաբերութեան ձե-
ւին զանազան անուններով, մանաւանդ «ԼՕ-
ՐԻՍ-ՄԵԼԻՔՈՎ», «Գլինկալ ԳԵՅՄԱՆ» և
«Գլինկալ ՍՈՐՈՒՆԻ»: Նախագուշացնելով
իմ ծխախոտը գործածողներին խնդրում եմ
ուշադրութիւն դարձնել իմ ֆիրմայի հե-
տեւեալ նշանների վրա. 1) Հրապարակական
հասանութիւն 1865 թուականի Մօսկվայի
հանդէսից, 2) Ոսկեայ մեղալ Մօսկվայի
տեխնիկական հանդէսից 1872 թ., 3)
Պատուաւոր կարծիք 1873 թ. Վիեննայի
աշխարհահանդէսից, 4) մեծ մեղալ 1876 թ.
Ֆիլադելֆիայի միջազգային աշխարհահանդէ-
սից, 5) Արձաթէ մեծ մեղալ 1878 թ.
Փարիզի աշխարհահանդէսից, իսկ այդ նշան-
ները չունենող արդիւնաբերութիւնը ԽԵՆ-
ԻՄ ԿԵՂՎ ՀԱՄԱՐՆԵՒ: ՄԱԿԵԴՈՒՆԻԱՅԻՑ նո-
րեւում ստացայ ամենալաւ ՀՈՏԱԻԷՑ ԵՄԱ-
ԽՈՏ: Լաւ յատկութեան ծխախոտ սիրող-
ներին խնդրեմ զիմել Թիֆլիսի մէջ. Սպի-
րիտոն ի վանովից Պօպովին, Բամազովին,
Բայանդուրովին, Միկիտովովին, Բէժման-
ովին, Տէր-Գրիգորեանց և ընկ. Գեպոյն, որ
գտնվում է Գօրովնիսկի փողոցի վրա, իշխան
Բագրատիօն-Մուխրանսկու տանը: ԱՅԴ ԱՆ-
ՁԻՆՔ ՈՒՂԱԿԻ ԻՄ ԳՈՐԾԱՐԱՆԻՑ ԵՆ
ՍՏԱՆՈՒՄ ԵՄԱԽՈՏԸ:
Բաւտովի 1-ին գիլղիայի վաճառական և
ծխախոտի գործարանատէր ԵԱՎՈՎ ՍԵՄԵՆ-
ՆՈՎԻՉ ԿՈՒՇՆԱՐԵՅՈՎ:
1—12